

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/3

12 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ 25.07.2013 թ-ի թիվ S-47 գրությամբ բերված բողոքը «ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ կողմից հաշվարկված պարտավորությունների դեմ:

«Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ (այսուհետ նաև ընկերություն) բողոքում մասնավորապես նշված է.

12.11.2008 թ-ին «ԿԱ ՊԵԿ-ը դիմել է «վարչական դատարան «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ-ից 01.10.2008 թ-ի դրությամբ հոգուտ պետական բյուջեի 1.103.676,9 հազար դրամ բռնագանձելու պահանջով:

«վարչական դատարանը, 29.10.2008 թ-ին որոշում է կայացրել դատահաշվապահական և տնտեսագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին: 25.06.2009 թ-ին «վարչական դատարանը հիմք ընդունելով փորձագետի եզրակացությունը վճռել է հայցը բավարարել մասնակի՝ «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ-ից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել ընդհանուր 381.682.400 դրամ՝ ըստ հարկատեսակների, մնացած մասով հայցը մերժվել է: «վճռաբեկ դատարանի 02.04.2010 թ-ի որոշմամբ «գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Բեկանվել է «վարչական դատարանի 25.06.2009 թ-ի վճռի՝ հայցը մերժելու մասը և գործն այդ մասով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Վճռի մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ:

10.08.2010 թ-ին «ԱՆ ԴԱՀԿ ծառայության ՊԵԿ հայցերով բռնագանձումների բաժնի կողմից հարուցվել է կատարողական վարույթ, որի համաձայն «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ-ից հոգուտ «ԿԱ ՊԵԿ-ի պետք է բռնագանձվեր 381.682.400 դրամ գումար: Հարուցված կատարողական վարույթի շրջանակներում մեր ընկերությունը պարբերաբար կատարել է մասնակի վճարումներ «ԱՆ ԴԱՀԿ ծառայությանը: Ընկերության 17.12.2012 թ-ի թիվ S-38 հարցմանը «ԴԱՀԿ ծառայությունը պատասխանել է, որ հոգուտ «պետական բյուջեի բռնագանձման ենթակա գումարը 21.12.2012 թ-ի դրությամբ կազմում է 144.077.100 դրամ:

Թիվ ՎԴ/7013/05/08 վարչական գործով նոր քննության ուղարկված մասով «վարչական դատարանը 19.07.2012 թ-ին վճիռ է կայացրել, որի համաձայն բավարարվել է 62.058.100 դրամի չափով «ԿԱ ՊԵԿ հայցապահանջը՝ ըստ տարբեր հարկատեսակների, որոնք հիմնականում տարբեր տույժ-տագանքներ են: 09.30.2012 թ-ին «վարչական վերաքննիչ դատարանը վճիռը թողել է անփոփոխ, իսկ «վճռաբեկ դատարանի 21.12.2012 թ-ի որոշմամբ վերադարձրել է «գլխավոր դատախազի տեղակալի բերված վճռաբեկ բողոքը: Որոշումը մտել է օրինական ուժի մեջ կայացման պահից: «ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի ՊԵԿ հայցերով բռնագանձումների բաժնի կողմից 06.02.2013 թ-ին հարուցվել է թիվ 01/11-389/13 կատարողական վարույթ, որի համաձայն «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ-ից հոգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձել 62.058.100 դրամ:

Այսպիսով, 06.02.2013 թ-ի դրությամբ «ԱՆ ԴԱՀԿ ծառայության կողմից «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ-ից բռնագանձման ենթակա գումարի չափը՝ երկու կատարողական վարույթներով, կազմել է 206.135.200 դրամ:

«Կառավարության 11.04.2013 թ-ի թիվ 366-Ն որոշմամբ «ԿԱ ՊԵԿ-ը «Հայէլեկտրամեքենա» ԲԲԸ-ից պետական բյուջեի նկատմամբ ունեցած 136.389.500 դրամ պարտքի դիմաց ընդունել է ընկերությանը պատկանող, «ԱՆ ԴԱՀԿ ծառայության կողմից հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացված՝ Երևան քաղաքի, Մանանդյան 41/4

հասցեում գտնվող անշարժ գույքը: Փաստացի 18.04.2013 թ-ի ի դրությամբ եկու կատարողական վարույթների շրջանակներում <<Հայէլեկտրամեքենա> ԲԲԸ-ից հոգուտ պետական բյուջեի բռնագանձման ենթակա պարտքի մնացորդը կազմել է 69.745.700 դրամ:

Համաձայն Շենգավիթի հարկային տեսչության կողմից << վարչական դատարանին ներկայացրած 23.04.2013 թ-ի թիվ 976/32-3 հայցադիմումի 01.10.2008–19.03.2013 թ.թ. ընկած ժամանակահատվածում <<Հայէլեկտրամեքենա> ԲԲԸ պարտավորությունների ընդհանուր չափը կազմում է 290.299.464 դրամ:

Համաձայն 30.07.2009 թ-ի թիվ 001 պայմանագրի հավելված-պարտավորագրի, 31.07.2009 թ-ին վճարված 71.768.100 դրամից 28.893.100 դրամը (վճարման հանձնարարագիր թիվ 1/9 31.07.2009թ.), ուղղվել է նույեմբեր, դեկտեմբեր 2008 թ-ի, հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հանիս 2009 թ-ի առաջացած ընթացիկ սոցիալական ապահովագրական վճարների մարմանը, իսկ մնացած 42.875.000 դրամը (վճարման հանձնարարագիր թիվ 1/8 31.07.2009թ.) նախկինում առաջացած սոց. ապահովագրական վճարների մարմանը: Հարկ է նշել, որ վերը նշված վճարված գումարը՝ ամբողջությամբ հարկային մարմինների կողմից ուղղվել է նախկինում առաջացած սոց. ապահովագրական վճարների մարմանը, որը մեր հաշվարկների արդյունքում առաջացրել է լրացուցիչ 9.146.730 դրամ տույժ՝ սոց. ապահովագրական պարտավորությունների գծով:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում նաև այն փաստը, որ համաձայն 25.06.2009 թ-ի << վարչական դատարանի վճռի՝ 01.10.2008 թ-ի դրությամբ սոց. ապահովագրական վճարների գծով տույժը կազմում է 59.200.300 դրամ, իսկ շահութահարկի գծով տույժը՝ 128.975.700 դրամ: Սակայն Շենգավիթի <Տ կողմից սոց. ապահովագրական վճարների գծով տույժը 01.10.2008 թ-ի դրությամբ գրանցվել է 61.442.025 դրամ, շահութահարկի գծով տույժը՝ 129.593.700 դրամ: Այսինքն, Շենգավիթի <Տ կողմից սոց. ապահովագրական վճարների գծով տույժն ավել է հայվարկվել 2.241.725 դրամով, իսկ շահութահարկի գծով տայժը՝ 618.000 դրամով:

Հայցի գումարային տվյալներում ներառված չէ նաև այն նվազեցված գումարը, որն առաջացել է սոց. ապահովագրական պարտավորությունների գծով նպատակային վճարների ճշգրտման արդյունքում՝ գումարով 7.462.869 դրամ:

Այսպիսով, Շենգավիթի <Տ կողմից ներկայացված առ 01.06.2013 թ-ի փոխադարձ հաշվարկների ակտի համաձայն <<Հայէլեկտրամեքենա> ԲԲԸ պարտավորությունները պետական բյուջեի նկատմամբ տարրեր հարկատեսակների գծով ապառքի մասով կազմում են 24.006.906 դրամ: Նույն ակտում ներառված չէ ԱԱՀ-ի ապառքի գծով 22.736.114 դրամ գերավճարը: Պարտադիր սոց. ապահովագրական վճարների գծով ապառքի մասով 98.197.240 դրամ մարում կատարելու հետևանքով <<Հայէլեկտրամեքենա> ԲԲԸ առ 01.06.2013 թ-ի դրությամբ որևէ պարտավորություն չունի: ԱԱՀ-ի գծով մարումը կազմում է 15.456.053 դրամ:

01.10.2008 թ-ից հետո կատարված նպատակային վճարումները, որոնք չեն նվազեցվել սոց. ապահովագրական պարտավորությունների գծով ընթացիկ առաջացող ապառքների գումարից, պետք է առնվազն նվազեցվեն նույն հարկատեսակի գծով առաջացած տույժերից:

Ըստ <<Հայէլեկտրամեքենա> ԲԲԸ հաշվարկների, պարտավորությունները 01.10.2008-01.06.2013 թ.թ. ժամանակահատվածում տարբեր հարկատեսակների գծով կազմում են 15.859.400 դրամ ապառքի գումար և 89.688.100 դրամ տույժ և տուգանքի գումար, ընդամենը՝ 128.283.700 դրամ:

Այսպիսով, առ 01.06.2013 թ-ի դրությամբ <<Հայէլեկտրամեքենա> ԲԲԸ պարտավորությունները պետական բյուջեի նկատմամբ ներառյալ մինչև 01.10.2008 թ-ի << ԱՆ ԴԱՀ Ծառայությունում գտնվող երկու կատարողական վարույթներով պարտավորությունները, այն է՝ 69.745.700 դրամը, կազմում է 175.293.200 դրամ:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է վերանայել և վերահաշվարկել ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ կողմից հաշվարկված պարտավորությունները, որն առ 01.06.2013 թ-ի դրությամբ կազմում է ընդամենը 175.293.200 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Հայէլեկտրամեքենա> ԲԲԸ և ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ ներկայացուցիչների բերած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում>:

Քննարկվող դեպքում <Հայէլեկտրամեքենա> ԲԲԸ նկատմամբ պարտավորությունների հաշվարկման պայմաններում գործ ունենք ընկերության համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության հետ: Այսինքն, ընկերության նկատմամբ հաշվարկված պարտավորությունների ապացուցման պարտականությունը տվյալ դեպքում կրում է վարչական մարմինը՝ ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչության:

Սույն բողոքի քննարկման ընթացքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ տվյալ դեպքում ընկերության նկատմամբ պարտավորությունները հաշվարկվել են վերոգրյալ օրենսդրական նորմի, այն է՝ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, Հանձնաժողովին չներկայացվեցին համապատասխան ապացույցներ, որոնք կհիմնավորեին ընկերության բողոքում բերված փաստարկների և ապացույցների հիմնվոր չլինելու հանգամանքը:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում կիրառելի է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն. <Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել>:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչության կողմից ընկերության նկատմամբ հաշվարկված պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. <Հայէլեկտրամեքենա> ԲԲԸ 25.07.2013 թ-ի թիվ S-47 գրությամբ բերված բողոքը բավարարել:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչությանը. կատարել <Հայէլեկտրամեքենա> ԲԲԸ պարտավորությունների վերահաշվարկ՝ հիմք ընդունելով ընկերության 25.07.2013 թ-ի թիվ S-47 բողոքը:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ